— Իզուր ախորժակներդ մի փչացրէք, ես եկել եմ ձեզ հրաւիրելու մեր տունը:

— Երեւի երէցկինը մի լաւ բան պատրաստած կը լինի նախաճաշիկի համար, — ժպտալով հարցրեց վարժապետը:

— Եթէ լաւ չլինի, վատ էլ չի լինի, — պատասխանեց քահանան նոյնպէս ժպտալով:

— Անպատճառ լաւը կը լինի. ես հրաժարւում եմ իմ ունեցածը սեղանի վրայ դնել. թող մնայ. այսօր իմ ճաշը դրանցով արդէն կարելի է պատրաստ համարել:

Որքա՜ն փոխոել էր նա, որքա՜ն մեղմացել էր նրա բնաւորութիւնը, որքա՜ն քաղցրութեամբ էր վարւում այդ մարդկանց հետ: Ես միշտ համարում էի նրան խստասիրտ, անհամբեր, կամակոր եւ բռնասէր մի անձնաւորութիւն: Բայց այժմ ներկայանում էր նա որպէս գիւղացու սրտի, հոգու, զգացմունքների մարմնացած մի արտայայտութիւն, որ, նրանից ծագելով, գիտէր նրան սիրելի լինել:

Սուրճից յետոյ մենք ամէնքս դիմեցինք տէր հօր տունը: Արեւը նոր էր սկսել ծագել. նրա արշալոյսը աւելի գեղեցիկ էր, քան երեկոյեան վերջալոյսը: Փոշիանման նուրբ մառախուղը վեր էր բարձրանում ցօղազարդ բուսականութեան վրայից, եւ ամբողջ շրջակայքը եփ էր գալիս, գոլորշիանում էր: Աղջիկները, ջրի սափորները ուսներին, վերադառնում էին մերձկայ աղբիւրից: Վաղորդեան թեթեւ ցուրտը տոել էր նրանց թշերին թեթեւ կարմրութիւն: Ծերունիները, նստած կտուրների վրայ, տաքանում էին առաջին ճառագայթներով եւ նայում էին դէպի ծովը, որ այդ րոպէում մի արծաթեայ մեծ ափսէի նմանութիւն էր ստացել: Ուշացած, ետ ընկած երիտասարդները շտապում էին լծել արօրը կամ գութանը: Հնձաւորի մանգաղի փայլը շողշողում էր հեռոից: Տաւարների նախիրը, ձիաների երամակը վաղուց էին դուրս քշել, իսկ ոչխարների հօտերը դեռ նոր քաղում էին թարմ ծաղիկները կանաչ խոտերի հետ: Գեղեցի՛կ էր գիւղական առաւօտը, խաղաղ, երջանիկ գիւղացու առաւօտը, որի քրտինքը վաղորդեան ցօղի հետ ոռոգում էր դաշտերը, որի վաստակը չէր հարստահարւում, որի զաւակները ամբողջ տարի ուտելու հաց ունէին եւ տաք բնակարան:

Որ կողմից եւ անց էինք կենում, կտուրների վրայ նստած մարդիկ խմբով ոտքի էին կանգնում եւ գլուխ էին տալիս: Այդ պատիւը վերաբերում էր, ի հարկէ, գլխաւորապէս տէր հօրը, ռեսին եւ վարժապետին, որոնք գիւղացիներից հաւասար յարգանք էին վայելում: Խրճիթների երդիկներից ծուխը